**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

**ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի կարիքների համար «ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

գ. Շինուհայր

«10» «ապրիլի» 2026թ., ժամը 10:00

**Ընդունել ի գիտություն, որ Eauction համակարգի կողմից հայտերի վերջնաժամկետը եղել է 06.04.2026թ., ժամը 15:00-ին, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 07.04.2026թ. ժամը 15:00–ին: Աճուրդի ամփոփման արդյունքները ներառված են սույն արձանագրության մեջ:**

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

- Արթուր Հովակիմյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ)

***Հանձնաժողովի անդամներ՝***

- Էրիկ Խաչատրյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ)
- Լուսինե Հակոբյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ)

***Հանձնաժողովի քարտուղար՝*** Հարություն Հարությունյանը (համակարգում՝ ԳՊ/ԳՀԱ)

**«ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Հ. Հարությունյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում հրավերվով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին անհամապատասխանությունների մասին.
3. «ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում հրավերվով պահանջվող փաստաթղթերի համապատասխանության մասին.:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.eauction.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Հ. Հարությունյան)

**1.1** Ըստ **www.eauction.armeps.am** կայքի տվյալների՝ Տաթևի համայնքապետարանի կարիքների համար «անվադողերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | Փ. ՍԱՄՍԱՐ ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. «ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Eauction համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Հ. Հարությունյան)

2.1 **Eauction** համակարգի կողմից չմերժված Փ. ՍԱՄՍԱՐ ՍՊԸ–ի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարություններն** և պահանջվող փաստաթղթերը առկա են:

2.2 **Eauction** համակարգի կողմից չմերժված Փ. ՍԱՄՍԱՐ ՍՊԸ–ի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) **դիմում-հայտարարությունը** և պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են, բացառությամբ տեխնիկական բնութագրի, որոնցում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Մասնավորապես՝

1. Տեխնիկական բնութագրի ձևակերպման անհամապատասխանություն

Հրավերի պահանջով Փ. ՍԱՄՍԱՐ ՍՊԸ-ն պարտավոր էր ներկայացնել հստակեցված տեխնիկական բնութագիր, մինչդեռ Փ. ՍԱՄՍԱՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված բնութագիրը բառացիորեն վերարտադրում է ընդհանուր նկարագրությունը և չի ներկայացվում պարտավորության ձևակերպմամբ:

Օրինակ՝

o Հրավերով սահմանված է.

«Պիտանելիության ժամկետ է սահմանվում՝ ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր, մատակարարը պարտավոր է ապահովել նշված ապրանքների պիտանելիությունը օգտագործման համար, հակառակ դեպքում՝ ոչ պիտանի ապրանքները ենթակա են փոխարինման նորով»:

o Մինչդեռ անհրաժեշտ էր ներկայացնել պարտավորության հստակ ձևակերպում, օրինակ՝

«Պիտանելիության ժամկետը կներառի՝ ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր, և պարտավորվում ենք ապահովել նշված ապրանքների պիտանելիությունը օգտագործման համար հակառակ դեպքում՝ ոչ պիտանի ապրանքները կփոխարինվեն նորով»:

2. Ապրանքի նույնականացման տվյալների անհամապատասխանություն

Չնայած ներկայացվել են անվադողի մոդելը, ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և արտադրողը, բայց դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այն է՝ ձեր կողմից ներկայացվել է, որ հրավերով պահանջվող անվադողերը արտադրեվել է ձեր կողմից(Փ. ՍԱՄՍԱՐ), կամ Ապրանքային նշանը, կամ ֆիրմային անվանումը, կամ մոդելը, որոնք գնահատող հանձնաժողովի գնահատմամբ, հնարավոր չէ:

Փ. ՍԱՄՍԱՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված դ կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին « **ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18**» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**3.«ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Հ. Հարությունյան)

3.1 Հաշվի առնելով 2.2 կետը և «Գնումներների գործընթացի կազմակերպման» կարգի 526-ն որման 41-րդ կետը գնահատող հանձնաժողովը որոշեց Փ. ՍԱՄՍԱՐ ՍՊԸ-ի հայտը գնահատել անհամապատասխան՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

**4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Հ. Հարությունյան)

4.1 .«**ՍՄՏՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/18**» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել 14.04.2026թ., ժամը 12:00-ն, գ. Շինուհայր, Կենտրոնական փողոց 14 հասցեում ՝ Տաթևի համայնքապետարանում:
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հովակիմյան

Հանձնաժողովի անդամներ՝ Է. Խաչատրյան

Լ. Հակոբյան

քարտուղար ՝ Հ. Հարությունյան